ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱՄԱՍԻԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«09» օգոստոսի 2016 թվական գյուղ Ամասիա

ՈՐՈՇՈՒՄ 20-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.050311 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՎՃԱՐ ՍԵՐՎԻՏՈՒՏ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ « ՖԵՆՀԱԼ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԱՆՎՃԱՐ ՍԵՐՎԻՏՈՒՏԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 50-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի դրույթներով՝ Ամասիայի համայնքի ավագանին

որոշում է՝

1. «Կասկադ» ՓՀԷԿ-ի 35 կվտ լարման օդային գիծն անցկացնելու նպատակով Ամասիայի համայնքի սեփականությունը հանդիսացող հողերից՝ համաձայն «Ֆենհալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից կազմված սխեմաների, 0.050311 հեկտար հողամասի նկատմամբ ճանաչել անվճար սերվիտուտ 99 տարի ժամկետով:
2. Առաջարկել Ամասիայի համայնքի ղեկավար Աղասի Ամիրյանին «Ֆենհալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքել անվճար սերվիտուտի պայմանագիր:

Ավագանու անդամներ՝

Դավթյան	Արտեմ	կողմ
Հովսեփյան	Հովսեփ	կողմ
Մանուկյան	Արթուր	կողմ
Մկրտումյան	Արթուր	կողմ
Քոչոյան	Ալեքսան	կողմ
Սարգսյան	Ալեքսան	կողմ

Ամասիայի համայնքի ղեկավար՝ Ա. Ամիրյան

«09» օգոստոսի 2016 թվական
գյուղ Ամասիա